ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՑՈՒՐՏԸ

ԵՒ ՆՈՐԱ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆՔ

ԱՑՏՆԻ է թէ ամառան սաստիկ տաքերուն պէտք կ'ըզգանք զովացնել սառով թէ ուտելիք և թէ ըմպելիք. դարձեալ ծանօթ է որ սառը կը գործածենք ջերմի և մարմնոյ այլեայլ մասանց բորբոքման դէմ. այս ծանօթութիւնները այնչափ հին են՝ որ չատ դարեր առաջ միշտ ձմեռուան սառը կը հաւաքէին ամառան գործածութեան համար։ Սակայն արդի քաղաքականութեան զարգացմամբ՝ նախկին սառերկրեայ սառնատանց դրութիւնն և գործածութիւնը՝ այլ ևս մեծամեծ քաղաքաց բազմազգի պիտոյից չէր բաւէր. պէտք եղաւ դիմել այն ատեն բնական սառնային մթերանոցաց, ալպեան սառնատանց, հիւսիսային ծովեզերաց և բարձրադիր լճաց։ Այս կերպով մասնաւոր վաճառականութիւն մը ձևացաւ, որ մանաւանդ 'ի Հիւսիսային Ամերիկա անհաւատալի կերպով զարգացաւ։ Մասնաւորապէս Նահանգաց հիւսիսային գաւառները՝ հարաւային գաւառաց և մինչև իսկ յԱւստրալիա և յարևելեան Հնդիկս ահագին քանակութեամբ սառ կը ղրկեն, և քիչ տարի առաջ ալ յԵւրոպա իսկ կը ղրկէին, ուր այժմ Նորուեկիոյ և Շուեդի ծովեզերաց սառը կը գործածուի։ Օրինակի համար, Նորուեկիայէ 'ի Հաւրը տարին 2000 տակառաչափ սառ կու գայ. Ալպեան սառնարանաց և Ժիւրայի ինչի չլճերու սառոյցներն ալ փորձեցին 'ի վա-

digitised by A.R.A.R.@

ճառ հանել, սակայն գործադրութեան և փոխադրութեան ծախք շատ ծանր են և այսու չեն թողուր մրցելու։

Սակայն այս վաճառականութիւնը օրէ օր կ'անհետանայ, արուեստական սառուցի գործածութիւնն ընդհանրանալուն պատճառաւ. խորտակման, հարման, բեռնաւորման, ճանապարհին վրայ սառուցին մասամբ հալելուն, և արտաքին ջերմութենէն պահպանելու համար ընդարձակ մթերանոցներ ունենալու անհրաժեշտ հարկաւորութեան պատճառաւ՝ այնչափ արգելքներ են՝ յորոց և ոչ մին ունի տեղւոյն վրայ և գործածութեան պիտոյից համեմատ պատրաստուած սառը։ Դարձեալ բնական սառոյցը ստէպ աղտոտ է, պակասութիւն մը՝ որով ինչ ինչ պիտոյից համար չի կըրնար գործածուիլ։

Երեք միլիոնք կը գործածուին ջուրը մինչև սառուցի աստիճանը պաղեցընելու համար. աղային լուծմամբ, ցնդող հեղուկաց շոգիացմամբ, և խտացեալ կապերու ծաւալմամբ. առաջին դրութիւնը սակաւաքանակ գործածութեանց կը ծառայէ։ Ընդհանրապէս երեք մաս սառ և մէկ մաս խոհանոցի աղ կը գործածուի, և արդէն այս խառնուրդը իսկոյն 24 աստիճան կը նուազեցնէ բարեխառնութիւնը, շնչորակը և նատրոնի ծծմբատը եթէ գործածենք՝ այն ատեն աւելորդ է սառ դնելը. այս դրութիւնը փոքր քանակութեամբ պաղպաղակ շինելու կը գործածուի։

Իսկ եթէ ուզենք մեծ քանակութեամբ սառ արտադրել՝ լաւագոյն դրութիւնն է հեղուկաց շոգիացումը. տաք երկիրներու մէջ այս բանը հնուց ի վեր փորձը ցուցուցեր էր. 'ի Հնդկաստանդիշեր ատեն բաց օդոյ մէջ յարդէ ծածկոյթի մը վրայ՝ ծակոտկէն նիւթէ շինուած տափակ անօթ մը կը դնեն. ջուրը տաքնալով՝ սաստիկ շոգիացում յառաջ կուգայ՝ որոյ արդիւնքը միայն ջրոյ վրայ զգալի ըլլալով, որովհետև յարդը կ'արգելու երկրային ջերմութեան հաղորդակցութիւնը, առաւօտը կանուխ կը տեսնուի. որ յարդէ ծածկուածին վրայ բարակ խաւ մը սառ կապեր է. այս նախնական դրութեան տեղ փոխանակեց՝ ծծմբական թթուուտի և պարապութենէ յառաջ եկած արագ շոգիացումը. որովհետև այս թթուուտը ջրային գոլորշին յինքն կը քաշէ և կը ծծէ։ Լեզի արդէն 1890ին օդահան գործարանի տակ երկու անօթ դնելով՝ մին լի ջրով, իսկ միւսն ծծմբական թթուուտով՝ տեսաւ որ արուեստական սառ կը գոյանայ. նոյն սկզբան վրայ հիմնեալ է Քարբէի սառուցի մեքենան։

Քարբէ գտաւ նաև ուրիշ դրութիւն մը՝ որ յատկապէս մեծ քանակութեամբ սառ պատրաստելու համար յարմարագոյն է. իբրև շոգիացեալ հեղուկ կամ ծնող ցրտութեան՝ կը գործածուի հե-

digitised by A.R.A.R.@

դուկ անուշադրը զոր բարձրագոյն աստիճանի ջերմութեան պիտի ենթարկենք. այս ոճով ի ձեռն ջերմութեան սառ յառաջ կու գայ, և մէկ հազարակրամ ածուխ՝ բաւական է հինգ կամ վեց հազարակրամ սառ չինելու համար։ Սակայն այս մեքենայն պակասութիւն մ'ունի, շատ ջուր կը գործածէ. դարձեալ մեքենային կաթսայն երբեմն պայթելով և երբեմն տաքնալով՝ ընդհատեալ կերպով սառ կ'ունենանք։ Այս պակասութիւնները չունի Լինտի մեքենան՝ որոյ մէջ ևս հեղուկ անուշադրը կը գործածուի. այս մեքենային գործողութիւնը անընդհատ է և մէկ հազարակրամ ածուխը բաւական է 30 հազարակրամ սառուցի համար. այլք անուշադրի տեղ ծծմբական եթեր կամ այլ թթուուտներ սկսան գործածել. սակայն անուշադրի մեքենայք շատ տարածեալ են։

Երրորդ կերպն է նախ ճնշել և ապա անդայոտացնել կազերը։ Կազ մը եթէ ջրհանի մը տակ ճնշենք՝ նախ կը տաքնայ և ապա տարածուելով՝ իւր առաջին բարեխառնութիւնը կը ստանայ։ Սակայն եթէ առաջին գործողութեան ժամանակ ջերմութիւնը արգելունք՝ միշտ ցուրտ պահելով ընդունարանը՝ հետևեալ տարածութեան միջոց յիրաւի կատարեալ ցրտութիւն մը յառաջ կու գայ։ Այս գրութիւնը՝ որ քիմիական գործիչներու պէտք չունի՝ տեսականապէս խիստ կատարեալ է, սակայն 'ի գործադրութեան շատ պակասաւոր։ Սակայն այս դրութիւնը շատ յարմար է օդը ցրտացնելու համար, և ինչ ինչ տեղեր ինչպէս 'ի Փարիզ՝ կեդրոնական գործատունէն ուրիշ տեղեր կը հաղորդուի խողովակաց ձեռքով, և զանազան պիտոյից կը գործածուի։ Մեծ քաղաքաց մէջ սառ պատրաստելու այնպիսի մեքենաներ կան՝ որ օրուան մէջ մինչև 15,000 հազարակրամ սառ կրնան չինել, և տակառաչափը կ'արժէ 7 – 10 ֆռանք։ Արուեստական սառը՝ թէ զտութեամբ և թէ բիւրեղային մաքրութեամբ շատ աւելի գերազանց է բնական սառուցէն։

Սառուցի ամենաոչինչ մաս մը միայն կը գործածուի խոհանոցաց և այլ տնական պիտոյից համար։ արուեստը և ճարտարութիւնը մեծ քանակութեամբ կը գործածեն. ինչպէս օրինակի համար չոքոլատի, շաքարի, պանրոյ, կարագի, գարեջրոյ և այլն չինութեանց համար։

digitised by A.R.A.R.@